ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 8 հուլիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի ապրիլի 22-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝մուտքագրված 30.06.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով ծրագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագիրն ստորագրվել է 2009 թվականի ապրիլի 22-ին Երեւանում՝ երկու երկրների միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում համագործակցությունը զարգացնելու եւ խորացնելու նպատակով:

2. Ծրագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- ապահովել կրթական համակարգերի կառուցվածքի, բովանդակության եւ կազմակերպման, ինչպես նաեւ կրթական եւ գիտական հաստատությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում.
- տարեկան տրամադրել.

- բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճան ստանալու համար 4 կրթաթոշակ՝ ուսումնառության լրիվ ժամկետով,

- ոչ պակաս, քան 1 ամիս եւ առավելագույնը մինչեւ 12 ամիս ժամկետով կրթաթոշակ՝ մասնագիտացումը խորացնող եւ գիտական հետազոտություններ կատարող ասպիրանտների, դոկտորանտների եւ դասախոսների համար.

- կրթական ծրագրին մասնակցող անձանց ապահովել.

- կրթաթոշակով,
- անվճար կրթությամբ,
- կրթական ծրագրով՝ համաձայն ազգային օրենսդրության,
- ուսանողական հանրակացարանով՝ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան,
- անվճար բժշկական ծառայություններով՝ ազգային օրենսդրության համաձայն,

- գրադարաններից, արխիվներից, փորձասենյակներից եւ այլն օգտվելու թույլտվությամբ.

- համալսարանների միջեւ դասախոսների փոխանակման դեպքում ապահովել.

- ամենամյա աշխատավարձով՝ գործող ազգային օրենսդրությանը համապատասխան,

- կահավորված կացարանով,

- անվճար բժշկական ծառայություններով՝ ազգային օրենսդրության համաձայն.

- խրախուսել Հայաստանի կրթական եւ գիտական ամսագրերում հոդվածների եւ համատեղ ուսումնասիրությունների եւ հետազոտությունների հրատարակումը, ինչպես նաեւ համատեղ գիտաժողովների անցկացումը եւ այլն:

3. Ծրագրի հայերեն, բուլղարերեն, անգլերեն տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ընթացքում տարաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տեքստը: Ծրագրում կատարվող փոփոխություններն ու լրացումները կձեւակերպվեն ծրագրի անբաժանելի մաս հանդիսացող առանձին արձանագրություններով, որոնք ուժի մեջ կմտնեն ծրագիրն ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով՝ անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի պահպանմամբ:

4. Ծրագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի ապրիլի 22-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջեւ կրթության եւ գիտության բնագավառներում 2009-2012 թվականների համագործակցության ծրագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 հուլիսի 2009 թվականի
ՍԴՈ- 814